կամեցաւ կնութեան առնել, բայց երբ մերժու�ստացաւ՝ որոշեց բռնի ոյժի դիմել։ Այստեղ Մովսէս Խորենացին յիշատակում է ժողովրդական վիպասանութիւնից մի հատուած, ուր նկարագրւում է այդ առևանգման պատկերը։

Հեծաւ քաջ թագաւոր Արտաշէսը գեղեցիկ սև ձին,
Եւ հանեց ոսկէ օղով կարմիր կաշէ պարանը,
Եւ անցաւ ինչպէս սրաթև արծիւ դեռի միջով,
Եւ հանեց ոսկէ օղով կարմիր կաշէ պարանը,
Ձգեց Ալանների օրիորդի մէջքին,
Եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը,
Արագ հասցնելով նրան իւր բանակը*)։

Մի կողմը թողնելով այս հատուածի մասին Մովսէս Խորենացու տուած անձնական բացադրութիւնը, մենք իրաւունք ունենք բառացի հասկանալ վերոյիշեալ նկարագրութիւնը։ Եթէ ժողովրդական վիպասանները մինչև իսկ երևակայական ու լեգենդար դէպք են պատմում այդ հատուածում, այնուամենայնիւ պէտք է 'ի նկատի առնենք, որ վիպասանութիւնների մէջ նկարագրած պատկերները միշտ համապատասխան են լինում ժողովրդի կենցաղի պայմաններին, նրա աշխարհայեացքի աստիճաններին։ Ուստի այս դէպքումն էլ, եթէ ժողովրդական կեանքում կենդանի չլինէր առևանգման սովորոյթը, կամ եթէ այդ սովորոյթն այդտեղ դատապարտելի լինէր, երբէք վիպասանները մի բանաստեղծական երգ չէին հիւսիլ իրենց հերոսացրած թագաւորի ամուսնութեան մասին. թագաւորի, որ առևանգմամբ է կին առնում։ Ընդհակառակն շատ հաւանական է, որ ժողովրդի կեանքում տեղի էր ունենում առևանգումն և այն էլ, ինչպէս ենթադրում ենք, շատ զարգացած չափով։ Դրան ապացոյց են մի շարք արգելական ու պատժական կանոնները, որոնք սահմանուել են հայկական օրէնսդրութեան մէջ և որոնք դարերի ընթաց-

*) Մովսէս Խորենացու՝ հայոց պատմ. գիրք Բ, գլ. Ծ. աշխարհ. թարգմ. Խորէն ծ. վ. Ստեփանէի։

Հայ մատենագրության թուանշային գրադարան